Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

75/4171/ 24 ապրիլի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224


# 97 տարի անց. ոչինչ չի մոռացվել




Ա

## Միայն մենք չենք բազմաչարչար

Երբ դու ինքդ քո մասին ասում ես՝ «բազմաչարչար ժողովուրդ», դու, առաջին հերթին, նկատի ունես, որ դրանով քո ժողովուրդը տարբերվում է մնացածներից: Այսինքն՝ կան աշխարհիս երեսին ժողովուրդներ, որոնք իրենց պատմության ընթացքում չեն չարչարվել, զրկանքներ չեն կրել, տեղահան չեն արվել: Այդ տրամաբանության համաձայն՝ կան ժողովուրդներ, որոնց տները չեն ներխուժել թշնամիները, չեն սպանել անզեն մարդկանց, չեն բռնաբարել կանանց, չեն վառել եւ թալանել ողջ ունեցվածքը: Դա միայն հայերի հե՞տ է պատահել: Դա մեր ազգային առանձնահատկությո՞ւնն է: Թերեւս, որոշակի տարբերությունն այն է, որ ոչ բոլորի հետ է դա տեղի ունեցել համեմատաբար վերջերս՝ 20-րդ դարում, եւ ոչ բոլոր սպանող-վառող-բռնաբարողներն են թուրքերի նման լկտիաբար պնդում, թե իրենք եւ իրենց պետությունը հայերի նկատմամբ ոչ մի հանցագործություն չեն գործել, մի բան էլ՝ հանցագործը մենք՝ հայերս ենք:

Բայց դարձնել քո վերքը, քո բազմաչարչար լինելը մի տեսակ պարծանքի առարկա, «ազգային բրենդ» եւ դրանով փորձել ինքնահաստատվել, ինձ թվում է՝ սխալ ճանապարհ է: Կառուցել «ազգային գաղափարախոսությունը» «այս փոքրիկ հողակտորում ծվարած, մազապուրծ եղած, ջարդված, կոտորված, բազմաչարչար ազգի» հոգեբանությամբ, իմ տպավորությամբ, մեզ սխալ ուղղությամբ է տանում: Ռուսական կամ խորհրդային պետության կազմում այդ «խեղճանալը» ուներ իմաստ՝ այդպիսով դու պահպանում էիր քո ազգային ինքնությունը, լեզուն, մշակույթը, պատմությունը, ճիշտ է՝ որոշակիորեն աղավաղված տեսքով: Վերջին 20 տարում մենք պետք է մշակեինք Ցեղասպանության վերաբերյալ նոր, խորհրդայինից եւ «սփյուռքահայկականից» տարբերվող քաղաքական հայեցակարգ՝ թե Հայաստանում այդ հարցն ընկալելու եւ թե աշխարհում այն ներկայացնելու առումով: Բայց մենք դա չարեցինք՝ ուրիշ բաներով էինք զբաղված:

Այժմ էլ ընտրություններով ենք զբաղված՝ մոռանալով, որ դա փոքրիկ մի ժամանակաշրջան է, որի կրքերը մեկ ամիս հետո, այսպես թե այնպես, մարելու են: ՀՅԴ-ն եւ «Ժառանգությունն» այսօր հայտարարել են լռության օր, որքան հասկանում եմ՝ նախընտրական քարոզչությունից ազատ օր: Ճիշտ նախաձեռնություն է. տհաճ կլինի, եթե այսօր ապրիլի 24-ի կամ որեւէ այլ առիթով քաղաքական ուժերը դարձյալ իրար կշտամբեն կամ մեղադրեն: Մի օր կարելի է ապրել առանց քաղաքական դատարկաբանությունների:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՀԱԿ-ը նմանակում է «Ժառանգության» կարգախոսը

Երեկ «Առավոտի» հետ զրույցում «Ժառանգություն» կուսակցության խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը հայտարարեց, թե «Ժառանգությունը» հստակ ծրագիր ունի եւ դրա իրականացման ուղղությամբ առաջ է շարժվում՝ փորձելով ձեռնպահ մնալ քաղաքական այլ ուժերի կողմից իրեն ուղղված ցեխարձակումները մեկնաբանելուց: Այդուհանդերձ, նա նաեւ նկատեց, թե «Ժառանգությանը» քննադատող ՀԱԿ-ը հիմա էլ իրենց կարգախոսն է նմանակում եւ «գալիս ենք»-ի մոտիվներով հայտարարություններ է հնչեցնում:

Կարդացեք էջ 3:

### «Գրանցված չի, որ մենք պիտի իշխանության գանք»

Aravot.am-ը բողոք-դժգոհություններ է ստացել տարբեր բուհիմնարկներից, ուսանողներից, ուսուցիչներից, որ իրենց ստիպողաբար տանում են ՀՀԿ-ի նախընտրական քարոզարշավներին, ընդ որում՝ նույնիսկ շրջանից շրջան, քաղաքից քաղաք: ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը «Առավոտին» հավաստիացրեց, որ մեր օրերում որեւէ մեկը որեւէ մեկին չի կարող ինչ-որ բան պարտադրել, իսկ մեզ հասած տեղեկություններն էլ որակեց իբրեւ «պրովոկացիա»: Ասաց, որ հստակ պատասխաններ կարող է տալ միայն այն դեպքում, երբ շատ կոնկրետ՝ մարդկանց անուն-ազգանուններով, հիմնարկների անվանումներով տեղեկություն ներկայացնենք: Մեր դիտարկմանը՝ եթե տվյալներ հրապարակենք, եւ այդ մարդիկ հեռացվեն աշխատանքից կամ լավագույն դեպքում նկատողությունների ու տույժերի արժանանան՝ դա հարցի լուծո՞ւմ է, Սահակյանը հակադարձեց. «Բայց նման բան հնարավոր չէ, որովհետեւ գրանցված չի, որ մենք պիտի իշխանության գանք, որ աշխատանքից հեռացնենք»:

### Սարկոզին կմասնակցի Հայոց ցեղասպանությանը նվիրված արարարողությանը

Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզին այսօր Փարիզում նշելու է Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցը: Նա երեկոյան ժամը 7-ին ելույթ է ունենալու Կոմիտասի արձանի առջեւ՝ Երեւանի պուրակում: Սարկոզին Ֆրանսիայի անունից ծաղկեպսակ է դնելու՝ պահակազորի ուղեկցությամբ: Ինչպես Փարիզից տեղեկացնում է Ժան Էքյանը, Ֆրանսիայի պատմության ընթացքում սա կլինի առաջինը, երբ Ֆրանսիայի նախագահը կմասնակցի 1915թ. Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված արարողությանը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Տարելից

Այսօր Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցի օրն է:

### Եղանակ

Երեւան +7 +23, Շիրակ -1 +17, Կոտայք -1 +17, Գեղարքունիք -1 +17, Լոռի +3 +19, Տավուշ +7 +21, Արագածոտն լեռներ -1 +17, Արագածոտն նախալեռն. +5 +22, Արարատ +5 +23, Արմավիր +5 +23, Վայոց Ձոր լեռներ -1 +17, Վայոց Ձոր նախալեռն. +5 +23 , Սյունիքի հովիտներ +9 +19, Սյունիքի նախալեռներ +4 +17, Արցախ +7 +19

## «Միայն բանակով տարածք չենք կարող պահել»

Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) ղեկավար Արամ Սարգսյանը երեկ Վանաձորում ընտրողների հետ հանդիպման ժամանակ կարծիք հայտնեց, թե միայն բանակով տարածք չենք կարող պահել. «Այսօրվա ժամանակակից աշխարհում միայն բանակով տարածք չես կարող պահել: Հայաստանը պիտի կարողանա ապահովել իր պաշտպանությունը եւ դրանով մեկտեղ այնքան հզոր լինել, որ մեր հարեւանն ախորժակ չպահի մեր տարածքների ուղղությամբ»:

Ըստ նրա՝ այն իրավիճակում, երբ ժողովուրդը չի վստահում իշխանությանը, երբ ժողովուրդը օր օրի ծերանում է, եւ երիտասարդներ չկան, որ գան, փոխարինեն նրանց, եթե ժողովրդի մի մասը դուրս է գնում երկրից, եւ ամայանում է երկիրը, ինքնին հասկանալի է, որ ազգային, պետական անվտանգությունը հարցականի տակ է դրվում: «Այն կոալիցիան, որը գործել է այսքան տարի, դա իսկապես կրել է շատ ֆորմալ բնույթ: Եվ երբ հիմա գալիս ասում են՝ այ, հիմա կսկսենք սոցիալական խնդիրներ լուծել, սա իրականում քաղաքական նոնսենս է. նրանք այդ իրավունքն այլեւս չունեն»,- ասաց ՀԴԿ ղեկավարը: Նրա խոսքերով՝ պետությունը պիտի վերադարձնի իր շահութաբեր գործարանների սեփականությունը, ազգայնացնի ընդերքը. «Եթե մենք մասնավորին թույլ ենք տալիս, որ մեր ընդերքի հարստությունից օգտվի, ապա մենք պիտի թույլ չտանք, որ ամբողջ շահույթը ձեռքներից տանի»:

ՀԴԿ ղեկավարը ընտրողներին գիտակցաբար ընտրություն կատարելու կոչ արեց: «Մենք ասում ենք՝ դուք որոշեք, մենք ձեզ ասում ենք՝ դուք ընտրեք, մեր ասածը միայն սա է, բայց եթե ընտրելու եք, ապա գիտակցաբար արեք, հասկացեք, թե ինչու եք դա անում, ում եք վստահելու, ինչու եք վստահելու»,- ասաց Արամ Սարգսյանը:

Ա. ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

## Ամեն ինչ կերեւա Ազգային ժողովում

Նախընտրական շրջանում առաջադրված թեկնածուների նկատմամբ բռնությունները «Միավորված հայեր» կուսակցության քաղխորհրդի նախագահ Ռուբեն Ավագյանը բացատրում է պատռակովով. «Մեծամասնական թեկնածուների հետ են բռնությունները լինում: Ովքե՞ր են մեծամասնականով առաջադրված հիմնական թեկնածուները՝ օլիգարխները, ինչո՞ւ են բռնանում, որովհետեւ պաշտոնի կռիվ է: Մենք դա գիտակցում էինք, դրա համար էլ մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ չառաջադրեցինք»:

Պարոն Ավագյանը, վերլուծելով կուսակցությունների կարգախոսները, հանգել է այն եզրակացության, որ դրանք մեկ իմաստ ունեն՝ խաբիր ժողովրդին, եթե կարող ես. «Առաջարկում են տարեկան առնվազն 100.000 աշխատատեղեր, 5 միլիոնանոց Հայաստան, 200.000 դրամ աշխատավարձ. մենք առաջարկում ենք Ազգային ժողովում վերանայել օրենքները եւ դրանք ծառայեցնել ժողովրդի շահերին, ոչ թե օլիգարխների: Միջազգային տվյալներով՝ գտնվում ենք կոռումպացված երկրների 127-րդ տեղում, այսինքն՝ մարդակերների շարքում ենք գտնվում»:

Պարոն Ավագյանը քաղաքական դաշտում չի տեսնում պետականամետ ուժ. «Հավատանք, որ փոխենք, փոխվենք՝ ի՞նչ դառնանք, փոխվենք, ծառայենք ազգի շահերին, դառնանք պետականամետ: Այսօր խոստումներ են տալիս, բայց ամեն ինչ կերեւա Ազգային ժողովում»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# «Քվեարկեք նրան, ում հավատում եք»

### Երեկ Արարատի մարզում դիմելով ժողովրդին՝ ասաց Գագիկ Ծառուկյանը



«Ես այս երկրից չեմ գնալու, իմ երեխաների հետ այստեղ եմ մնալու: Սա է մեր հայրենիքը»,- երեկ Արտաշատում ընտրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը՝ նկատելով, որ մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններով ժողովրդին հնարավորություն է տրված շուտափույթ եւ վճռական փոփոխություններ իրականացնելու: Նա կոչ արեց, որ մարդիկ իրենց այդ հնարավորությունն օգտագործեն գիտակցաբար, պարտքի զգացումով եւ ռացիոնալ: Նկատենք, որ երեկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական քարոզարշավը շարունակվեց Արարատի մարզում: ԲՀԿ առաջնորդը նախ՝ հանդիպում ունեցավ ստրատեգ Վազգեն Սարգսյանի ծննդավայր Արարատ գյուղում: Ապա, նախատեսված ծրագրից դուրս, այցելեց նաեւ ստրատեգի թանգարան: Այնտեղ նրան դիմավորել է Վազգեն Սարգսյանի եղբայրը՝ Արմեն Սարգսյանը, ուղեկցել, ծանոթացրել թանգարանին:

Այնուհետեւ Արարատ քաղաքում Գագիկ Ծառուկյանի հանդիպումն ընտրողների հետ կայացավ ստրատեգի արձանին հարող տարածքում: Ծառուկյանը ծաղկեպսակ դրեց Վազգեն Սարգսյանի հուշարձանին: Այստեղ ԲՀԿ նախագահին այնպիսի ջերմ ծափերով, ողջույններով եւ «ուռա»-ներով ընդունեցին, որ վերջինս ասաց, թե նման ջերմ ընդունելությունից հուզվել է ու չի կարողանում խոսել: Այնուամենայնիվ, Ծառուկյանն իր հետ հանդիպման եկածներին ասաց, թե անելու է ամեն ինչ, որպեսզի այս հավատն ու սպասելիքները արդարանան: Ասաց, որ Ծառուկյանն այն քաղաքական գործիչներից չէ, որ քաղաքականությունից դուրս գա ու մոռանա ամեն ինչ, ամենքին. «Բայց մնում է ձեր հույսը, հավատը արդարացնելու համար»: Նա նաեւ ասաց, որ առանց հույսի ու հավատի լավ ապագա ունենալ չենք կարող:

Ներկայացնելով կուսակցության նախընտրական ծրագիրը՝ Գագիկ Ծառուկյանն ասաց, որ ԲՀԿ-ն այլ ուժերի նման այնպիսի խոստումներ չի տալիս, որ «վաղը Եվրոպա ենք դառնալու»: Ասաց, որ իրենք նաեւ չեն խոստանում, որ թոշակները 1000 դոլար պետք է լինեն: Բայց ասում են, որ այնպիսի տնտեսական դաշտ են ապահովելու, աշխատանքի այնպիսի հնարավորություններ են ապահովելու, որ ամիս-ամիս, եռամսյակ-եռամսյակ յուրաքանչյուր մարդ իր կենսամակարդակի մեջ փոփոխություններ զգա:

ԲՀԿ առաջնորդը նաեւ խոսեց արտագաղթից, ասաց, որ դրա կանխելու առաջին ճանապարհը մանր ու միջին բիզնեսի համար արտոնյալ պայմաններ ստեղծելն է, գյուղացիական տնտեսություններին հարկային բեռից թեթեւացնելը, հատկապես տնտեսական ճգնաժամի պայմաններում: Ու հետո միայն, երբ գործարարը, գյուղացին ոտքի կկանգնեն, պետությունը պետք է նրա հետ հարաբերվի համապատասխան հարկային դաշտում: Ըստ Գագիկ Ծառուկյանի՝ Հայաստանի բնակչությունն առնվազն 4-5 միլիոն պետք է լինի, որպեսզի մեր երկիրը զարգացման իրական ուղի բռնի: Իսկ դրա համար նախեւառաջ աշխատանքային բարենպաստ պայմաններ պետք է ստեղծվեն, այնպիսի պայմաններ, որ բոլոր այն մարդիկ, ովքեր արտագաղթել են, ետ վերադառնան: Նա նաեւ հավաքվածներին միասնականության կոչ արեց, բայց պատվիրեց ընտրություններին գնալ ու քվեարկել խղճի թելադրանքով: Ասաց, որ անգամ Արարատի մարզում գտնվող իր բիզնեսներում զբաղված մարդկանց չի պարտադրում քվեարկել ԲՀԿ-ի օգտին. «Քվեարկեք նրան, ում հավատում եք»:

Երեկ Վեդի եւ Արտաշատ համայնքներում, որտեղ նույնպես բավականին մարդաշատ հանդիպումներ եղան, եւ ԲՀԿ առաջնորդը ջերմ ընդունելության արժանացավ, բացի կուսակցության նախընտրական ծրագրերը ներկայացնելուց՝ Գագիկ Ծառուկյանն անդրադարձավ նաեւ իր զենքի հայտնի պատմությանը, որը բավականին շահարկումների առիթ դարձավ: Ըստ նրա՝ այդ պատմությամբ փորձում են իրեն ժողովրդի աչքից գցել: Ծառուկյանը կոնկրետ չմատնանշեց, թե ով կամ որ քաղաքական ուժն է փորձում սեպ խրել իր եւ ժողովրդի միջեւ, միայն ասաց, որ չնչին բաներից փորձում են պատմություններ սարքել՝ ստվերում թողնելով իրական խնդիրները: Ասաց նաեւ, որ ժողովրդի հետ ինքը խնդիրներ չունի. «Ես ձեր ցավը տանեմ, ես ձեզ սիրում եմ, դուք գիտեք իմ վերաբերմունքը, ու որ տեսնում եմ էս վստահությունը...»,- ԲՀԿ առաջնորդը չհասցրեց խոսքն ավարտել, նրան ընդմիջեցին ծափերով եւ փոխադարձ ջերմություն արտահայտող վանկարկումներով: Ծառուկյանը կոչ արեց չհավատալ նման խոսակցություններին, ինչպես նաեւ չտրվել մարզպետների, քաղաքապետների եւ գյուղապետերի ճնշումներին ու քվեարկել այն ուժի օգտին, որին կնախընտրեն:

ԲՀԿ-ի քարոզարշավը երեկ ավարտվեց Մասիս քաղաքում, որտեղ Գագիկ Ծառուկյանը նաեւ ներկայացրեց մեծամասնական ընտրակարգով ԲՀԿ-ի կողմից առաջադրված թեկնածու Տիգրան Ստեփանյանին, ասաց, որ վերջինս միշտ բնակիչների կողքին է եղել, դրա

# Եթե վատ կաշխատենք, կասեք՝ բարի ճանապարհ

### Երեկ Վարդենիկում հայտարարեց ՀԱԿ առաջնորդը

ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը երեկ Մարտունու տարածաշրջանի Վարդենիկում ՀԱԿ-ի քարոզարշավի ժամանակ նշեց. «Ես չեմ տեսել մի մարդու, որը շահիծի այս իշխանություններին, որը գոհ լինի իր կյանքից: Հարց եմ տալիս՝ դուք հիմա ավելի լա՞վ եք ապրում, քան 4 տարի առաջ, ավելի շատ երեխա՞ է ծնվում, քան 4 տարի առաջ: Ամեն ինչ գիտեք՝ ունենք պետություն, իշխանություն, որի օրոք Վարդենիկի բնակչությունը կրճատվել է, ավելի շատ թաղումներ եք անում, քան ամուսնություններ, եթե այս ամեն ինչը գիտեք, տեսնում եք, ո՞ւմ ձեռքը կգնա՝ այս իշխանություններին նորից ձայն տալու: Գալու են, խոստումներ են տալու էլի, եթե կարող է լինել մեկը, որ կհավատա դրանց խոստումներին ու նրանց նորից ձայն կտա՝ ես այդ մարդու մասին ոչինչ չեմ կարող ասել: Ազատվեք այս գողերից, սրիկաներից, որոնք ձեր կաշին քերթում են ու քերթելու են մինչեւ վերջ: Եթե Ռոբերտի, Սերժի ստեղծած այս պետությունը մնաց այս երկրի վրա, այլեւս մարդ չի մնալու այս երկրում, երկիրը դառնալու է թուրքերի ու ադրբեջանցիների արոտավայրը: Սերժ Սարգսյանը ստեղծել է գողական իշխանություն: Ընտրակաշառք են բաժանում, լսեք՝ այդ որտեղի՞ց է այդ ընտրակաշառքը: Հեռուստատեսությամբ դուք կլսեք եւ մեր ձայնը, եւ մեզ քննադատողների ձայնը: Հիմա ի՞նչ է կատարվում: Եթե դուք մեզ ամեն շաբաթ հեռուստատեսությամբ գոնե մի կես ժամ լսեիք՝ Սերժ Սարգսյանը վաղուց այս իշխանության գլուխ չէր լինի: Ստեղծել են ստալինյան լագերյան ինչ-որ երկիր, որտեղ եթե մեկը այլ կարծիք ունենա՝ կհայտնվի լավագույն դեպքում Սիբիրում: Եթե այդքան ուժեղ լինեին՝ ինչի՞ պիտի բոլորի բերանը փակեին: Դա անում է ամենահետին վախկոտը: Մենք աշխատելու ենք, մենք գալիս ենք, եթե վատ կաշխատենք, կասեք՝ բարի ճանապարհ, եթե չարացած կլինեք, ասեք՝ ռադ եղեք քաշեք գնացեք: Սերժից հետո չգիտենք, թե ով կլինի՝ իր տղան կամ փեսան, նույն իշխանությունն է լինելու: Ով իր պարտականությունները չկատարեց, թերացավ՝ դրանից անմիջապես պետք է ազատվել: Այդ հնարավորությունը ես ձեզ 100 տոկոսով խոստանում եմ: Եթե վատ կաշխատենք, մեզ վռնդեք այս իշխանությունից: Պատերազմի ժամանակ գոնե այստեղ լիճ կար, կարողանում էիք ձկովբանով մի կերպ ձեր ընտանիքները պահել»: Վարդենիկցիներից մեկը նկատեց՝ «ձկա ձուկ էլ չկա»: Լեւոն Տեր-Պետրոսյանի դիտարկմամբ՝ «ճիշտ եք ասում՝ ձկա ձուկ չկա, ձկա մենակ մուկ կա»:

Հ. ՉԵԲԵՉՅԱՆ

## ՀՀԿ-ն համերաշխության ջատագովներից է

ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ նախընտրական հանդիպումներ է ունեցել մայրաքաղաքի Նոր Նորք եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընտրողների հետ: Նոր Նորքի բնակիչների հետ հանդիպմանը ՀՀԿ նախագահը նշել է, որ մայրաքաղաքի ամենամեծ այս համայնքը միաժամանակ ամենամիասնական համայնքներից մեկն է, եւ դա շատ հաճախ կարեւոր դեր է ունեցել համայնքային խնդիրների լուծման հարցում: Ինչպես տեղեկացնում են ՀՀԿ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Հանրապետական կուսակցությունն էլ հասարակական համերաշխության ջատագովներից է: «Մեր բազմաթիվ քայլեր միասնականության խորհուրդն են ունեցել, մեզ հաջողվել է էապես մեղմել քաղաքական պառակտվածության ու անհանդուրժողականության դրսեւորումները մեր երկրում: Գալիք ընտրություններն էլ մենք պատկերացնում ենք այդպիսին, այդ ընտրություններին էլ մենք ներկայացել ենք ծրագրով, որը խարսխված է համերաշխության եւ ուժերի մեկտեղման կարեւորության վրա:

Մենք ասում ենք՝ ժամանա՛կն է, այո՛, վաղուց արդեն ժամանակն է անշրջելիորեն փոխել մեր քաղաքական կյանքի մթնոլորտը»,- ասել է Սերժ Սարգսյանը:

Առավոտ aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 24.04.2012

# «Ժառանգությունից» հակադարձում են ՀԱԿ առաջնորդին

## Արմեն Մարտիրոսյանն ասում է՝ ՀԱԿ-ն ամիսը մեկ նոր կարգախոս է հռչակում

ՀԱԿ առաջնորդ եւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ապրիլի 21-ին Ազատության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում խոստացել էր, որ երբ մտնեն խորհրդարան ու մեծամասնություն կազմեն, առաջին իսկ նիստին բարձրացնելու են Սերժ Սարգսյանի պաշտոնանկության հարցը, ու հավելել էր. «Եթե մեծամասնություն չենք կազմում, բայց մեր կողքին լինում են ուժեղ ընդդիմադիր խմբակցություններ, մենք նորից բարձրացնում ենք այդ հարցը: Եթե դա էլ չի լինում, նախագահական ընտրությունները հեռու չեն, մենք խորհրդարանը դարձնելու ենք պլացդարմ, տրամպլին, որ հարցը լուծենք նախագահական ընտրություններին»: ՀԱԿ առաջնորդը նաեւ հայտարարել էր, թե ԱԺ-ում իրենք գիշեր-ցերեկ ամեն նախարարից, վարչապետից, նախագահից սկսած՝ հաշիվ են պահանջելու, «ոստիկանապետը, դատախազը խորհրդարանից դուրս չեն գալու, գիշեր-ցերեկ լինելու են մեր հարցերի տարափի տակ»:

«Առավոտի» հետ զրույցում «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանն անդրադառնալով այս հայտարարությանը՝ նախ հարկ համարեց շեշտել, թե՝ ՀԱԿ առաջնորդն իր կարգախոսներն ամիսը մեկ փոխում է. «Նա սկզբում հայտարարում էր՝ թող ոչ մի զոհ ինձնից բացի չպահանջվի, հետո որոշեց, որ ԼՂ հարցով բանակցություններին չխոչընդոտելու համար պետք է հանրահավաքները դադարեցնել, թեեւ WikiLeaks-ից պարզվեց, որ դա ընդամենը հնարք էր եղել մարդկանց տուն ուղարկելու եւ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու համար: ՀԱԿ-ը քաղաքապետի ընտրություններն էլ էր նախագահական ընտրությունների երկրորդ փուլ հայտարարել, բայց երբ «Ժառանգությունն» ընդդիմության ձայները չփոշիացնելու համար հրաժարվեց ընտրապայքարից, ՀԱԿ-ն էլ հրաժարվեց իր մանդատներից, ու արդյունքում Երեւանի ավագանիում այսօր ընդդիմության որեւէ ներկայացուցիչ չկա: Հիմա նորից հայտարարվում է, թե խորհրդարան են մտնում նախագահին իմպիչմենթ հայտարարելու համար, եթե չստացվի... ՀԱԿ-ի համար ամեն մի փուլից հետո մի նոր փուլ է սկսվում, որը նախորդի հետ որեւէ կապ չի ունենում, բայց դա իրենց որոշելիքն է»:



Խոսելով ՀՀ կառավարության անդամներից ու մասնավորապես՝ ոստիկանապետից կամ գլխավոր դատախազից հաշիվ պահանջելու Տեր-Պետրոսյանի հավաստիացումների մասին՝ պատգամավոր Մարտիրոսյանն արձանագրեց, թե օրենքով սահմանված կարգով ԱԺ-ում կառավարության անդամներն իրենք են հաշվետվությամբ հանդես գալիս, այդ թվում նաեւ՝ ամեն քառօրյա նիստերի չորեքշաբթի օրերին պատգամավորի հետ հարցուպատասխանի ժամանակ: Նա հիշեցրեց նաեւ, որ ԱԺ կանոնակարգով կարգավորված է նաեւ գլխավոր դատախազի հաշվետվություն կամ հատուկ զեկույց ներկայացնելու կարգը: «Ուժային կառույցների ղեկավարները խորհրդարանում հաշվետվություն տալու խնդիր չունեն, բացառապես այն դեպքերի, երբ ընդունվում է մի առանձին եւ հատուկ որոշում՝ իրենց զեկույցով հանդես գալու հրավիրելու մասին, որի համար, սակայն, առնվազն մեծամասնություն պիտի լինես»,- պարզաբանեց Մարտիրոսյանը՝ մեր հարցին ի պատասխան նաեւ հավելելով, թե չգիտի՝ սա հերթական պոպուլիստական հայտարարությա՞ն կամ ընտրողներին գրավելու շարքի՞ց է:

Նույն հանրահավաքի ժամանակ Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը նաեւ մեկ այլ ուշագրավ հայտարարություն էր արել, որը վերաբերում էր ՀՅԴ, ԲՀԿ, ՀԱԿ միասնական շտաբին: Նա ասել էր, թե այդ շտաբը ընտրությունների վերահսկման չափազանց վստահելի մեխանիզմ է, որ «շատ լավ գործում է, արդեն սկսել են վերահսկել հիմա տեղի ունեցող խախտումները», բայց նաեւ ավելացրել էր՝ «շտաբի անդամներից մեկի վարքն ինձ համար անհասկանալի է, դա «Ժառանգությունն» է: Գուցե կրթությունս չի ներում, չեմ հասկանում իրենց պահվածքը, քանի որ չեմ հասկանում՝ զերծ եմ մնում մեկնաբանություններից: Ով հասկանում է՝ թող նա էլ մեկնաբանի»:

Մենք Արմեն Մարտիրոսյանից հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ է «Ժառանգությունն» այդ շտաբի նիստերը բոյկոտելու վերաբերյալ այնքան դժվարամարս բացատրություններ տալիս, որ ընդդիմադիր դաշտի իրենց մյուս գործընկերների, մասնավորապես՝ ՀԱԿ առաջնորդի համար եւս դա շարունակում է անհասկանալի պահվածք մնալ: «Կարծում եմ՝ այդ խնդրի առնչությամբ «Ժառանգության» բացատրությունը՝ երեք կետերով, շատ հստակ է, եւ Տեր-Պետրոսյանը, իհարկե, կարող է ու այդ ունակությունը միանշանակ ունի՝ դա հասկանալու, եթե միայն ցանկանա կամ դա իրեն ձեռնտու լինի: «Ժառանգության» բացատրությունը ընկալելու համար ընդամենը պետք է գրաճանաչ լինել, ու չեմ կարծում, թե դա հասկանալու համար առանձնահատուկ գիտելիքներ ունենալու խնդիր կա: Բայց հիմա, անկեղծ ասած, Տեր-Պետրոսյանին մեկնաբանելու ժամանակ էլ չկա: Մենք մեր գործն ենք անում եւ մեր բոլոր հնարավորություններով պայքարելու ենք առաջիկա ընտրությունների ազատ, արդար ու թափանցիկ ընթացքն ապահովելու համար: Եթե մեզ համար մտահոգության նյութ լինի՝ մենք ահազանգ կինչեցնենք, ինչպես անում ենք, ու դրա մասին տեղյակ կպահենք եւ իշխանություններին ու շահագրգիռ կառույցներին, եւ իրենց՝ միասնական շտաբին: Այստեղ ես առանձնապես խնդիր չեմ տեսնում»,- հայտարարեց «Ժառանգության» ներկայացուցիչը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «ՀՀՇ-ն ու ՀԱԿ-ը արժանապատիվ պարտվելու հունար էլ չունեն»

## Վստահ է Արտաշես Գեղամյանը

«Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը Aravot.am-ի հետ զրույցում անդրադարձավ նախօրեին ՀԱԿ թեկնածու Արամ Մանուկյանի՝ իրեն վերաբերող հայտարարություններին, թե ինքը Կարեն Դեմիրճյանի թիմում կանգնած՝ թիկունքից հարվածեց նրան. «Բացահայտ ստի են դիմում, Կարեն Դեմիրճյանի վեհ անունը հրապարակ բերելով՝ ուզում են սեփական անզորությունը եւ սեփական ձախողակ լինելը քողարկել: 1998 թվականի նախագահական ընտրություններին առաջադրվել էի ՀՀ նախագահի թեկնածու, ինչպես եւ Կարեն Դեմիրճյանը: Այնպես որ, թիկունքում կանգնած չէի կարող լինել, որովհետեւ ինքնուրույն քարոզարշավ էի վարում»:

Արամ Մանուկյանը նաեւ Գեղամյանի մասին ասել էր. «Ստեփան Դեմիրճյանին քաշեց, հորը քաշեց»: «Ազգային միաբանության» առաջնորդն այս առնչությամբ հիշեցրեց 2003-ի նախագահական ընտրությունների 1-ին փուլից հետո կատարվածը, երբ նախագահի 7 թեկնածուներ՝ նաեւ Ստեփան Դեմիրճյանը, «թուղթ ուղարկեցինք ԿԸՀ, որտեղ գրել էինք, թե մենք չենք ճանաչելու առաջին փուլի արդյունքները... Իսկ թե հետո այդ ստորագրությունից ո՞վ հրաժարվեց՝ թող Արամ Մանուկյանը մի հատ հետաքրքրվի, հետո նոր հետեւություններ անի»:

Արտաշես Գեղամյանը պնդեց. «Նա ստում է դաժանաբար: Իր բարբաջանքները ինձ համար հասկանալի են, երբ ՀԱԿ-ի վարկանիշը սրընթաց անկում է կատարում. իրենք գիտեն՝ եթե «Ազգային միաբանության» ցանկացած ղեկավարի հասցեին նման ստախոսություններով հանդես գան, ապա անհապաղ հակահարվածը կստանան, եւ իրենց անունը գոնե այդ պարագայում կշոշափվի: Կարծում եմ, որ մեր երկրի համար դավաճանական դրսեւորումներ գործած իշխանությունը, որի պարագլուխն էր Լեւոն Տեր-Պետրոսյանը, եւ «ճ» կլասի ֆունկցիոներ էր Արամ Մանուկյանը՝ պետք է լռեր այն պարզ պատճառով, որ իրենք 7 տարիների ընթացքում կարողացան հիմնահատակ կործանել Հայաստանի տնտեսությունը: Հիշեցնեմ՝ 1997 թվականին արդյունաբերությունը կազմում էր 1990 թվականի 47 տոկոսը, արդյունահանումը՝ ընդամենը 22 տոկոսը, վերամշակող ձեռնարկությունների հզորությունը կազմում էր 1990 թվականի 52 տոկոսը»:

«Ազգային միաբանության» առաջնորդը մեկնաբանեց նաեւ այն, թե ինչպես կարողացավ իշխանություններին այդքան քննադատելուց հետո առաջադրվել Հանրապետական կուսակցության համամասնական ընտրակարգով. «Սերժ Սարգսյանը դիմեց ժողովրդին ու քաղաքական բոլոր ուժերին, որ ինքը հանուն Հայաստանի Հանրապետության բաց է ու պատրաստ համագործակցության: Մենք՝ տեսնելով, որ դրանք լոկ խոսքեր չեն, համոզվեցինք, որ ՀՀ նախագահը ազնիվ ու անկեղծ է, իսկ նման պարագայում չընդունել համագործակցելու հրավերը՝ հանուն Հայաստանի Հանրապետության, այլ ընդդիմադիր խաղալ, քաղաքական գործչին հատուկ չէ»:

Ինչ վերաբերում է Արամ Մանուկյանի հայտարարությանը, թե Ա. Գեղամյանին լռեցնելու համար 30.000 դոլար են տրամադրել, պարոն Գեղամյանը զարմացավ. «Արամն էլ փողը տալու ժամանակ մոմը ձեռքին գյո՞ղ էր դրել: Արամ Մանուկյանի հայհոյախոսությունները խոսում են այն մասին, որ ՀՀՇ-ն ու ՀԱԿ-ը արժանապատիվ պարտվելու հունար էլ չունեն, թույլիկներ են»:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

# Նոր վարկատեսակ՝ «Բիզնես վարկ անվտանգության բարձիկով»

## Գրավի գնահատված արժեքի մինչեւ 100%-ի չափով ֆինանսավորում



ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Զարգացման Հայկական Բանկի Վարկավորման եւ Ներդրումների վարչության ղեկավար

Զարգացման Հայկական Բանկը շարունակում է նոր ծառայությունների եւ նոր վարկատեսակների առաջարկները իր հաճախորդներին: Այսօր արդեն բանկը շուկային առաջարկում է նոր առեւտրային վարկատեսակ, որը կարող է հետաքրքրել հատկապես իրավաբանական անձանց եւ այն անհատ ձեռներեցներին, ովքեր իրենց ներկայացրած գրավի դիմաց ձգտում են ստանալ առավելագույնս վարկային միջոցներ:

Զարգացման Հայկական Բանկն առաջարկում է «Բիզնես վարկ անվտանգության բարձիկով», որն իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցներին հնարավորություն է տալիս ստանալ գրավի գնահատման արժեքի մինչեւ 100%-ի չափով ֆինանսավորում: Վարկերը տրամադրվում են մինչեւ 5 տարի մարման ժամկետով, մինչեւ 100 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթի գումարի չափով, տարեկան առավելագույնը 16% տոկոսադրույքով: Վարկավորումն իրականացվում է հետեւյալ կերպ՝ բանկը հաճախորդին վարկավորում է գրավի գնահատված արժեքի մինչեւ 100%-ի չափով, ընդ որում՝ վարկի գումարի 70%-ը հաճախորդի կողմից տնօրինվում է վարկային պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո, իսկ 30%-ը հաճախորդի կողմից ներդրվում է բանկում որպես ժամկետային ավանդ 1 տարի ժամկետով, ՀՀ դրամով 12% տոկոսադրույքով: Տարին ավարտվելուց հետո, երբ հաճախորդը ձեւավորում է դրական վարկային պատմություն՝ չունենալով ժամկետանց պարտավորություններ, տնօրինում է նաեւ վարկի գումարի 30%-ը: Այն դեպքում, երբ հաճախորդն ունենում է ժամկետանց պարտավորություն, ավանդն (ամբողջությամբ կամ մասնակի) ուղղվում է ժամկետանց մասի մարմանը:




«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Մանրամասների համար՝
Տեղ. հեռախոս՝ 59 15 15, 59 15 08
www.armdb.com
info@armdb.com

# «Ոտքի վրա» ընդունված օրենք

## Փոքր ու միջին ձեռնարկատերերի հոգսը դեռ մի բան էլ ծանրացնում են



«Արտոնագրային վճարի մասին» օրենքում կատարված փոփոխությունները, որոնք ընդունվեցին անցյալ տարվա դեկտեմբերին, որակվում են որպես «ոտքի վրա» ընդունված օրենք: Այդ օրենքի հետ առնչվողները պարզ տեսնում են իրենց սպասվող անհարմարությունները, քանի որ դրանում առկա են որոշ թերություններ: Այս օրերին «Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնում» հավաքագրվում են գործարարների կողմից ներկայացված առաջարկությունները ու մատնանշած թերությունները, որպեսզի դրանք ներկայացնեն ՀՀ կառավարություն:

Չնայած որ կառավարությունը վստահեցնում էր, թե «նորացված» օրենքը հօգուտ փոքր ու միջին բիզնեսի է, սակայն օրենքն ուսումնասիրելով ու «Առավոտին» դիմած գործարարների դժգոհությունները լսելով՝ պարզ է դառնում, որ այն ամենեւին էլ հօգուտ ՓՄՁ-ի չէ:

«Թարմացված» օրենքն ուժի մեջ է մտել ապրիլի 1-ից, եւ եթե նախկինում անհատ ձեռներեցը 1 տաքսի էր շահագործում եւ վճարում ամսական 12 հազար դրամ հաստատագրված վճար, ապրիլի 1-ից արդեն պետք է վճարի եռամսյակի համար 20.500 դրամ: Այս գումարը 1 տաքսի շահագործող Ա/Ձ-ի համար ձեռնտու է, սակայն որպեսզի հասցնի անցնել արտոնագրային վճարին, անհատը պետք է նաեւ հասցնի տվյալ եռամսյակի առաջին ամսվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերն ու կատարել վճարումները: Խնդիրն այն է, որ եթե նույնիսկ եռամսյակի համար բարեհաջող վճարը կատարվել է, բայց ընդամենը 1-2 օր հետո ասենք՝ վարորդը հիվանդացել է, մեքենան փչացել է կամ էլ ավտովթարի է ենթարկվել, ինչի հետեւանքով Ա/Ձ-ն գուցեեւ մեկ ամիս ու ավելի չկարողանա աշխատանքի դուրս գալ, ապա վճարը չի վերադարձվում: Բացի այս, արտոնագրային եռամսյակն արդեն սկսվել է, իսկ բազմաթիվ մարդիկ, ասենք՝ մայիս ամսին են լիցենզիա ստանալու ու սկսելու իրենց գործունեությունը, այս պարագայում նրա դիմումը համարվում է ուշացած, եւ նրանց հարկայինում խորհուրդ են տալիս օգտվել տաքսի-սերվիսներին վերաբերող օրենքի մեկ այլ հավելվածից, ինչը բավականին թանկ է նստում տաքսիստի վրա:

«Նախ՝ այդ մարդը, որը ստիպված է տաքսի-սերվիսների համար նախատեսված արտոնագրային վճարով աշխատել, պետք է 44 հազար դրամ վճարի, որ մի 2 ամիս աշխատի, հետո՝ որպեսզի անցնի 1 մեքենա ունեցող շահագործող Ա/Ձ-ի արտոնագրային վճարին, որի ժամկետը սկսվում է հուլիսի 1-ից, նորից պետք է վճարի 20.500 դրամ: Ստացվում է, որ այդ մարդը կրկնակի, նույնիսկ եռակի վճարումներ է կատարելու»,- «Առավոտի» հետ զրույցում դժգոհեց «Քաղաքացիական դիրքորոշում եւ ակտիվ հասարակություն» հասարակական կազմակերպության նախագահ Գեւորգ Դոստուրյանը: Նրա խոսքերով՝ ի տարբերություն այլ տեսակի փոքր ու միջին բիզնեսի, տաքսիներինը շատ ռիսկային է, եւ ուղղակի բոլորի համար եռամսյակի մեկնարկային նույն ժամանակաշրջան սահմանելը ձեռնտու չէ: Նա պարզապես առաջարկում է յուրաքանչյուր Ա/Ձ-ին եռամսյակի մեկնարկային ժամկետ հաշվարկել, երբ դիմումն ու վճարումը կկատարի, այլ ոչ թե բոլորի համար անխտիր ապրիլի 1, հուլիսի 1 կամ հոկտեմբերի 1:

Օրենքի մեկ այլ կետն էլ, որը կրկին 1 մեքենա շահագործող տաքսիստներին է վերաբերում, ըստ պարոն Դոստուրյանի՝ ամենեւին էլ անհատ տաքսիստների շահերից չի բխում: Նրա խոսքերով՝ «Օրենքում շեշտվում է, որ տվյալ մեքենան պարտադիր պետք է աշխատեցնի, ավելի կոնկրետ ասած՝ վարի այն անձը, ում անունով ձեւակերպված է Ա/Ձ-ն: Այսինքն՝ եթե հոր անունով է, բայց հայրը վատառողջ է կամ հոգնած, ու հանկարծ որդին որոշի մի քիչ օգնել հորը՝ մեկմեկ տաքսիստություն անել, չի կարելի: Նման դեպքում, եթե հարկայինը հայտնաբերի, որ այդ օրը մեքենան այդ անձը չի վարում, այլ որդին կամ եղբայրը՝ կտուգանվի Ա/Ձ-ն, ու բավականին մեծ գումարով: Այսինքն՝ տվյալ դեպքում մեքենան ոչ Ա/Ձ-ի տիրոջ շահագործման դեպքում որդուն կամ եղբորը դիտարկում են որպես վարձու աշխատող, որի համար Ա/Ձ-ն հավելյալ վճարներ պիտի կատարի: Իսկ վարձու աշխատող ունեցող համարվում են այն ընկերությունները, որոնք մի քանի մեքենաներ են շահագործում»:

Պարոն Դոստուրյանի փոխանցմամբ՝ օրենքի վերաբերյալ իրենց առաջարկությունները ներկայացրել են պետական եկամուտների կոմիտե, ՀՀ վարչապետին, էկոնոմիկայի նախարարության «Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն», որտեղից հ/կ-ի ղեկավարին վստահեցրել են, որ օրենքի թերությունների մասին շատ դժգոհություններ են ստանում եւ նյութեր են հավաքում, որպեսզի առաջարկով դիմեն կառավարությանը:

Օրենքի մյուս բացերի մասին կանդրադառնանք առաջիկայում:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Հ. Գ. Նյութն արդեն պատրաստ էր տպագրության, երբ կառավարության արտահերթ նիստում քննարկվեց եւ որոշում կայացվեց հնարավորություն ընձեռել հարկ վճարողներին արտոնագրային վճարները կատարել նաեւ ամսական պարբերականությամբ, ինչպես նաեւ եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա ժամանակահատվածների համար ձեռք բերվող արտոնագրերի համար սահմանել արտոնագրային վճարի՝ ամսական դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափեր:

### Թունավորում

Կիրակի օրը Երեւանի Մոլդովական փողոցի թիվ 47 շենքի 29-րդ բնակարանից «1-03» ծառայություն ահազանգ էր ստացվել թունավորման մասին: 1942թ. ծնված Հռիփսիմե Գրիգորյանը, 1992թ. ծնված Հռիփսիմե Հակոբյանը եւ 1963թ. ծնված Ռուզաննա Մխիթարյանը շտապօգնության աշխատակիցների կողմից բուժօգնություն ստանալով՝ հրաժարվել են հիվանդանոց տեղափոխվելուց:

### Ջրահեղձում

Վայոց ձորի մարզային ոստիկանության վարչությունից հայտնել են, որ ժամը 16.00-ի սահմաններում Արտավան գյուղի բնակիչները գյուղով հոսող համանուն գետից դուրս են բերել նույն գյուղի բնակիչ՝ 1927թ. ծնված Լյուդվիգ Հակոբյանի ջրահեղձված դին:

### Ձորում

ԱԻՆ փրկարար ծառայությունից տեղեկացնում են, որ ահազանգ է ստացվել Սպիտակ-Երեւան ավտոճանապարհի 8-րդ կմ-ում տեղի ունեցած ավտոպատահարի մասին: Դեռեւս չպարզված հանգամանքներում «Օպել-վեկտրա» մակնիշի (առանց պետհամարանիշի) ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ գլորվել ձորակը: Վարորդ Հ. Հակոբյանը «1-03» ծառայության ավտոմեքենայով տեղափոխվել է Սպիտակի հիվանդանոց, որտեղ ստանալով անհրաժեշտ բուժօգնություն՝ դուրս է գրվել:

### Քննիչը պետք է իմանա պետական լեզուն

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը իր պաշտոնական կայքէջում տարածել է հայտարարություն՝ հատկապես կարեւոր գործերի քննիչի մեկ թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին: Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջներից մեկը գրական հայերենին տիրապետելն է: Քննիչը չպիտի ունենա ֆիզիկական արատներ եւ հիվանդություններ, պարտադիր պետք է ծառայած լինի ազգային բանակում:

# «Ինձ դատում են, որովհետեւ չեմ զոհվել»

## Ասում է գյումրեցի ազատամարտիկ Ժորա Աթոյանը

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ավարտին է մոտենում ՀԱԿ ակտիվիստ, ազատամարտիկ Ժորա Աթոյանի՝ մոտ 8 ամիս տեւած դատավարությունը: Դատախազը արդեն իսկ պահանջել է նրան ենթարկել 6 տարի 6 ամիս ազատազրկման. պատճառն այն է, որ Ժորա Աթոյանը մեղադրվում է խարդախություն կատարելու, կեղծ փաստաթղթերով զինվորական կենսաթոշակ ստանալու ու պետությանը 8.733.879 դրամի վնաս պատճառելու մեջ: Ու չնայած նույն մեղադրանքով քրեական գործեր են հարուցվել մի քանի ազատամարտիկների դեմ, այդուհանդերձ՝ ՀԱԿ ակտիվիստը շարունակում է պնդել, որ քրեական գործը շինծու է, եւ իր նկատմամբ քաղաքական հետապնդում են իրականացնում, քանի որ ինքը իշխանություններին ոչ ձեռնտու մարդ է:



Օրերս Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին մեկ անգամ եւս հայտարարեց ազատամարտիկը: «Դուք՝ լրագրողներդ, դատական նիստերին ներկա եք եղել ու տեսել եք, որ էսքան վկաները, նույնիսկ իրենց վկայակոչած մարդիկ չեն հերքել պատերազմի դաշտում իմ վիրավորվածության փաստը, նրանք միայն ասել են, որ էդ պահին չեն տեսել ինձ, իսկ պատերազմի դաշտում եղած, տրամաբանություն ունեցող յուրաքանչյուր մարդ շատ լավ գիտի, որ ռմբակոծության ժամանակ երբ որ մարդ խրամատում է, առաջին հերթին ինքը մտածում է իր մասին, գլուխը ոնց թաքցնի, որ հանկարծ չվնասվի, կողքիններին էդ պահին չի կարող տեսնել: Հեչ պարտադիր չէ, որ հենց էդ պահին ինչ-որ մեկը տեսներ, թե ես ինչպես եմ վիրավորվել, բայց փաստ է, որ ես վիրավոր եմ եղել, մարդիկ ինձ շտապօգնությունով դրել-ճանապարհել են, եւ էդ նույն շտապօգնության վարորդը եկել-ապացուցում է, որ ինձ ինքն է տեղափոխել, եւ ի՞նչ վիճակում: Եթե Արթուր Բաղդասարյանի հորեղբոր տղան ինձ պատերազմի դաշտում չի հանդիպել, նշանակում է՝ ես չեմ վիրավորվե՞լ, բայց Արթուր Բաղդասարյանի հորեղբոր տղեն ո՞վ է»,- նեղսրտեց Ժորա Աթոյանը:

«Առավոտը» ազատամարտիկից հետաքրքրվեց՝ եթե անմեղ է, ինչո՞ւ են նրան դատում. «Կոպիտ ասեմ՝ որովհետեւ չեմ զոհվել, չեմ մեռել, իշխանության դեմ էլ էդքան համարձակություն եմ ունեցել խոսելու, քննադատելու: Ես որ ինքնակամ պատերազմ գնացի, իսկական հիմնարկի՝ էլցանցի տնօրեն էի, պատգամավոր էի, ես կարող էի խիղճս շատ հանգիստ իմ տաք կաբինետում նստել, ի՞նչ էր եղել, մյուսների նման դեմ ու կողմ քվեարկել, մի բան էլ ելնեի հոխորտայի ու քննադատեի, ինչպես որ բոլորն էին անում: Ես նախընտրեցի զենքը, 88 թվականից շարժման մեջ եմ եղել, էնպես որ՝ իմ համար խորթ չէր պատերազմի դաշտ գնալը: Բայց Աստված մի արասցե, երեւի պատերազմ լինի, էսքան վիրավորված, ջղայնացած ինքնասիրությունս տրորած, ոտքի տակ գցած մարդկանց չնայեմ, էլի ելնեմ ու գնամ իմ երկրի համար»,- ասաց Ժորա Աթոյանը:

Մեկ շաբաթից պարզ կլինի, թե ինչ պատիժ կսահմանեն ազատամարտիկի նկատմամբ կամ առհասարակ նրան պատժելո՞ւ են, թե՞ ոչ:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ա aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 24.04.2012

# Ներքին լարվածություն կա

## Թիվ 14 ընտրատարածքում, որտեղից մի քանի անգամ պատգամավոր է ընտրվել Լյովա Խաչատրյանը, արդեն այլ թեկնածուներ են մրցակցում:

Արագածոտնի մարզի որոշ տարածաշրջաններ ընդգրկող այս ընտրատարածքում առաջադրվել է երեք թեկնածու՝ Ապարանի նախկին քաղաքապետ Ռազմիկ Պետրոսյանը՝ ՀԱԿ-ից, ԲՀԿ-ական Բազմասեր Առաքելյանը, Վրեժ Մարկոսյանը՝ ՀՀԿ-ից:

Պարոն Մարկոսյանին, բացի ՀՀԿ-ից, սատարում է նաեւ «Նիգ Ապարան» հայրենակցական միությունը: Հիշեցնենք, որ «Նիգ Ապարանը» վերջին ԱԺ ընտրություններում պաշտպանել է Լյովա Խաչատրյանի թեկնածությունը: Սակայն միությունն այս անգամ սատարում է Մարկոսյանին, որը «Տիգրան Մեծ» ՓԲԸ գլխավոր տնօրենն է:

Թիվ 14-ում, կարելի է ենթադրել, որ եռաթեւ ուժեղ ընտրապայքար է սպասվում, քանի որ երեք թեկնածուներն էլ ունեն հաղթանակի հնարավորություն: ԲՀԿ-ական Առաքելյանը, որն ամենաերիտասարդ թեկնածուն է, սպորտի բնագավառում երկար տարիներ տարաբնույթ գործունեություն է ծավալել եւ մարզի երիտասարդությունը հիմնականում նրա թեւից է: Նա նաեւ ԲՀԿ-ական փոխմարզպետ Մանաֆաս Առաքելյանի որդին է: Ռազմիկ Պետրոսյանը, բացի ՀԱԿ-ի թեկնածու լինելուց, նախկին ազատամարտիկ է, ժամանակին ղեկավարել է Ապարան քաղաքը եւ նույնպես ունի իր ընտրազանգվածը: Վրեժ Մարկոսյանին, ինչպես ասացինք, սատարում է «Նիգ Ապարանը», որը թեեւ քաղաքական կառույց չէ, բայց գրեթե բոլոր համապետական եւ



ՏԻՄ ընտրություններում ակտիվորեն մասնակցում է եւ վճռորոշ ազդեցություն ունենում:

Թե ինչպես է ընտրատարածքում նախընտրական իրավիճակը, Ռազմիկ Պետրոսյանը պատասխանեց. «Նորմալ, հանգիստ գնում է, առայժմ ոչ մի արտառոց բան չկա: Թեկնածուներով առանձին-առանձին հանդիպում ենք ընտրողների հետ»: Մամուլում լուրեր էին շրջանառվում, թե Պետրոսյանի եղբորը՝ Արամ Պետրոսյանին ազատելու են աշխատանքից կամ այլ աշխատանքի են տեղափոխելու: Վերջինս Ապարանի Պայմանագրային զնդի հրամանատարն էր, որը պահպանում է ԼՂՀ հյուսիսային սահմանը: Թե ինչ ընթացքում է այս գործը, Ռազմիկ Պետրոսյանն ասաց. «Այո, եղբորս տեղափոխել են Հրազդանի Զինկոմ, թեեւ դեռ չեն նշանակել»: Հարցին, թե այս տեղափոխումը կապվա՞ծ է իր քաղաքական գործունեության հետ, Պետրոսյանը պատասխանեց. «Ես ինչքան էլ փորձեմ, որ ասեմ՝ չէ, ժամանակը այնպես համընկավ, որ ինձ իրավունք է տալիս այդ կերպ մտածելու: Դա կարելի էր ավելի շուտ կամ ավելի ուշ անել: Ես զինվորական եմ եւ գիտեմ, որ այս ոլորտում կարող է յուրաքանչյուր պահին տեղափոխություն լինի, բայց տվյալ դեպքում, երբ դա համընկավ իմ առաջադրման հետ, ես իրավունք ունեմ մտածելու, որ կապված է իմ քաղաքական գործունեության հետ: Թեեւ եղբայրս էլ էր ուզում տեղափոխվել, 18 տարի առաջնային գծում էր, որից 13 տարին գնդի հրամանատար՝ նույն զորամասում, այն էլ՝ բարձր լեռնային տարածքում: Դե, ամեն դեպքում դա խնդիր չէ: Նույնիսկ կարող եմ ասել, որ դա որեւէ բացասական ազդեցություն չունեցավ, ժողովուրդը այդ վերաբերմունքից ավելի ագրեսիվ տրամադրվեց, որովհետեւ քաղաքականությունը եւ զինվորական ծառայությունը չի կարելի խառնել իրար»: Հարցին, թե ընտրատարածքում իշխանական լծակները օգտագործվո՞ւմ են որեւէ թեկնածուի օգտին, պարոն Պետրոսյանն, առանց անուններ տալու, պատասխանեց. «Իհարկե, օգտագործվում են: Թեկնածու կա, որը ոչ մի ռեսուրս չունի՝ բացի իշխանական լծակից եւ փողի ռեսուրսից: Դրա համար էլ հենց դրանց վրա է հույսը դրել»:

ԲՀԿ-ական թեկնածու Բազմասեր Առաքելյանն ընտրատարածքում լարվածության առկայության մասին ասաց. «Այո, կա լարվածություն, որովհետեւ ուժեղ մրցակցություն կա»: Հարցին, թե որքանո՞վ է իր փոխմարզպետ հայրը օգնում իրեն՝ օգտագործելով փոխմարզպետի լծակները: Թեկնածուն պատասխանեց. «Հայրս ինձ օգնում է որպես հայր եւ որպես իմ շտաբի պետ: Նա այս ժամանակահատվածում արձակուրդում է եւ միշտ իմ շտաբում է, որեւէ լծակի մասին խոսք լինել չի կարող: Դուք չեք կարող գտնել մեկին, ով կասի, թե նա պաշտոնական որեւէ լծակ է օգտագործում իմ քարոզչության համար: Մենք գիտակցում ենք, որ երբեմն լծակներով պարտադրելը եւ ճնշելն ավելի վատ է անդրադառնում թեկնածուի հեղինակության վրա եւ հակառակ ազդեցություն թողնում, մարդկանց ավելի է վանում քեզանից»: Հարցին, թե ինչպես է գնահատում ամենաերիտասարդ թեկնածուն իր հաղթելու հավանականությունը, քանի որ մրցակիցները հաճախ են շեշտում նրա երիտասարդ լինելը, 33-ամյա Առաքելյանը պատասխանեց. «Ես շատ երիտասարդ չեմ, իրենք են մեծ»:

ՀՀԿ-ական թեկնածու Վրեժ Մարկոսյանն «Առավոտի» հարցմանն ի պատասխան՝ նախընտրական իրավիճակը գնահատեց շատ հանգիստ եւ լավ: Իսկ թե ում է համարում իրեն հիմնական մրցակից, պատասխանեց, որ երկու մրցակիցներին էլ, քանի որ երկուսն էլ ուժեղ են: Իսկ թե ինչպես է գնահատում հաղթելու իր շանսերը՝ պատասխանեց. «Մայիսի 7-ին կերեւա»:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

### Մի քվեարկեք մեր փոխարեն

«Իրազեկ եւ կողմնորոշված սերունդ» խմբի արտերկրում ապրող անդամները երեկ հանդես են եկել կոչով, ուղղված հայաստանաբնակներին: «Մենք տեղեկացնում ենք, որ հանդիսանալով ՀՀ քաղաքացիներ, ներկայումս ֆիզիկապես ՉԵՆՔ գտնվում ՀՀ տարածքում ու ՉԵՆՔ քվեարկելու մեր տեղամասերում:

Մենք զրկված ենք նաեւ ՀՀ դեսպանատների կամ հյուպատոսարանների միջոցով մեր ժամանակավոր բնակության վայրերում քվեարկելու հնարավորությունից, հետեւաբար, մենք մեր կամքին հակառակ՝ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՉԵՆՔ մասնակցելու մայիսի 6-ի ԱԺ ընտրություններին: Եղբայրներ եւ քույրեր, տիկնայք եւ պարոնայք, հարգարժան պաշտոնյաներ, ՀՀ պետական մարմիններ, կուսակցություններ, կուսակցությունների երիտ. կառույցներ. ՄԻ ՔՎԵԱՐԿԵՔ ՄԵՐ ՓՈԽԱՐԵՆ, հետեւեք, որ ոչ ոք չքվեարկի մեր փոխարեն, քանզի դա կլինի աններելի հանցագործություն այս դիմումի հեղինակների, արտերկրում ապրող Հայաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների, մեր երկրի, մեր եւ ձեր զավակների դեմ: Կոչ ենք անում արտերկրում ապրող Հայաստանի բոլոր քաղաքացիներին՝ տեր կանգնել սեփական քվեին, որ այն չհայտնվի ուրիշի ձեռքում»:

### Ցմահ դատապարտյալը մահացել է

Արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող, ցմահ ազատազրկման դատապարտված, 1951թ. ծնված Ռաֆայել Մանուկյանն ապրիլի 22-ին, ժամը 11:45-ին, «Նուբարաշեն» ՔԿՀ-ից տեղափոխվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոն: Ժամը 14:00-ի սահմաններում, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում Ռ. Մանուկյանը մահացել է: Նախնական ախտորոշումը՝ ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում: Նախկինում երկու անգամ դատապարտված Ռ. Մանուկյանը 31.03.2006թ. Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտվել էր ցմահ ազատազրկման՝ երկու կամ ավելի անձանց սպանության մեղադրանքով: Փաստի կապակցությամբ նախապատրաստվում են նյութեր, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

# Անվճար պաղպաղակով, «Կոկա-կոլայով»՝ հանուն ՀՀԿ-ի

Անցած ուրբաթ օրը՝ ապրիլի 20-ի երեկոյան, Երեւանի «Սեւան» հյուրանոցի դիմացի մանկական զբոսայգում կայացել է երեւանաբնակ տավուշցիների՝ մեծամասամբ իջեւանցիների հավաք, որը կազմակերպել են գործարար Ղեւոնդ Ղալումյանը եւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի եղբայրը՝ Աշոտը: Ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 300 մարդ: Ներկաներին անվճար բաժանվել է պաղպաղակ, «Կոկա-կոլա», ելույթ են ունեցել երգի-պարի ժողովրդական համույթներ: Հավաքին մասնակցել է նաեւ ՀՀ նախագահի օգնական, ծագումով իջեւանցի Լեւոն Մարտիրոսյանը: Ելույթ ունեցողները՝ Քաղծառայության խորհրդի նախագահ Մանվել Բադալյանը, Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանը եւ «Ազգային միաբանություն» կուսակցության փոխնախագահ Կորյուն Առաքելյանը խոսել են առաջիկա ընտրություններում ՀՀԿ-ին եւ Սերժ Սարգսյանին սատարելու անհրաժեշտության մասին: Մանվել Բադալյանն ու Կորյուն Աթոյանը ծագումով Բերդի տարածաշրջանից են, Կորյուն Առաքելյանը՝ իջեւանցի: Հանդիպման մասնակիցները «Առավոտի» թղթակցին պատմեցին, որ նախկինում կոշտ ընդդիմության դիրքերից հանդես եկող «Ազգային միաբանություն» կուսակցության փոխնախագահի պաթոսով ելույթը ներկաները միանշանակ չեն ընդունել: Կ. Առաքելյանը գովեստներ է հնչեցրել նաեւ մարզպետ Արմեն Ղուլարյանի հասցեին, որը հանդիպմանը ներկա չի եղել:

ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի աջակցությամբ անտառ կստեղծվի

«Երկրի օր-2012» քարոզարշավի շրջանակում Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը եւ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը «Խոսրովի անտառ» արգելոցի հարեւանությամբ գտնվող բուֆերային գոտու ծառազուրկ հատվածում նախատեսում են անտառ ստեղծել: Ապրիլի 22-ին մեկնարկեցին անտառաստեղծման աշխատանքները. ծառատունկի շրջանակներում նախատեսված 2000 ծառերից 1000-ը տնկվեցին ապրիլի 22-ին, իսկ մյուս մասը կտնկվի աշնանը:

«Խոսրովի անտառ» արգելոցին կից այս տարածքը, որը գտնվում է Ուրցաձոր համայնքում, պահպանվում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից: Մասնավոր հատվածի կողմից կառավարվող եւ համակարգվող արգելոցի այս մոդելը առաջին եւ առայժմ միակ նախադեպն է Հարավային Կովկասում: Ծրագիրն իրականացվում է World Land Trust կազմակերպության



աջակցությամբ: Մեծ ծառատունկին մասնակցեցին տեղական եւ միջազգային կազմակերպություններ, Հայաստանում տարբեր երկրների դեսպանությունների, հասարակական եւ պետական հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ քարոզարշավի շրջանակում SMS-ների միջոցով ծառեր նվիրաբերած անհատներ, Ուրցաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, Ուրցաձորի «Արեւորդի» էկոակումբի սաներ, «Կանաչ դպրոց» ծրագրի անդամ աշակերտներ, լրագրողներ, տեղաբնակներ: Ծառատունկի հիմնական նպատակը տարածքի կենսաբազմազանության պահպանմանը նպաստելն է:

Տնկվող ծառատեսակների ընտրությունը եւս իրականացվել է՝ հաշվի առնելով բուֆերային գոտում եւ հարակից անտառներում բնակվող թռչնատեսակների եւ կենդանատեսակների պահանջները: Բոլոր ցանկացողները կարող են միանալ նախաձեռնությանը՝ ուղարկելով կարճ հաղորդագրություն 1059 համարին եւ նշելով անուն-ազգանունը կամ այն մարդու անունը, ում ցանկանում են ծառ նվիրել: Մեկ SMS-ծառի արժեքը 1000 դրամ է, ներառյալ ԱԱՀ-ն: Ծրագիրը նախատեսված է միայն «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի բաժանորդների համար:

# «Եթե Ձեր տան տակ լիներ ստրիպտիզանոց՝ կգյուլլեիք»

## Բանաստեղծ Արտեմ Հարությունյանը քաղաքապետին եւ վարչապետին կոչ է անում ազատել Գրողների միության բնակելի շենքը ժամանցի «օբյեկտից»:

Aravot.am-ը երեկ բանաստեղծ Արտեմ Հարությունյանից հետաքրքրվեց՝ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հայտարարված Երեւանում տոնի զգացողություն ունի՞: «Քանի որ մաֆիոզ խմբերը գրավել են ամեն ծակուծուկ, գրքի տոնը նախնադարյան դինոզավրիկի թափառումներ է հիշեցնում… Շատ մեծ քաղաքներ կան, որ տարիներով հերթի են կանգնած, եւ լավ է, որ որպես հինավուրց մշակույթ ունեցող ժողովուրդ, գրքի տոնը մեզ էլ բաժին հասավ:

Մենք սիրում ենք Երեւանը եւ պետք է այնպես անենք, որ մեր սրբազան հողը այսպիսի միջոցառումները իմիջիայլոց չանի: Գրքի տոնի համար եկած մասնագետները երեւի ապշեցին, երբ երեկ գիշերը ծանր թնդանոթներից ժամը 1-ին սալյուտ պայթեց Կենտրոնում, Բոշելիի երգեցողությունն էլ վերածվեց ռռնոցի՝ բարձրախոսների պատճառով: Այդ ամենը վատ կազմակերպվածության արդյունք էր: Ես դրանից չեմ էլ զարմանում, քանի որ ավելի վատ բաներ կան: Բազմիցս դիմել եմ կաթողիկոսին, հարգարժան վարչապետին, որ Գրողների միության՝ Տերյան փողոցում գտնվող բնակելի շենքի տակից «Օմեգա» ստրիպտիզանոցը հանեն, բայց պարզվում է՝ մաֆիոզ խմբերն այնքան ուժեղ են, որ պետությունը չի կարող այդ քայլին գնալ: Ստրիպտիզանոցը կանգնած է իբրեւ երկաթբետոնե կոնստրուկցիա, իբրեւ Մասիս սար, նույն համառությամբ ռիթմերը հնչում են, վերջում էլ ռուս աղջիկները դուրս են թափվում ու կանչում իրենց հաստափոր ընկերներին»:




Մտավորականները խոսեցին գրքի մայրաքաղաքից եւ արժեքների կորստից:

Գրող, հրատարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը, որը նույնպես հյուրընկալվել էր «Հայելի» ակումբում, բանաստեղծին խորհուրդ տվեց տունը փոխել, հետո էլ կատակեց, թե ստրիպտիզը վատ բան չէ, գրքի նման մի բան է:

Aravot.am-ը նրանից էլ հետաքրքրվեց՝ գրքի տոնի զգացողություն ունի՞: Հրատարակախոսն ասաց, որ գրքի տոնը իր համար գրեթե ամեն օր է, այս օրերին մասնակցել է հետաքրքիր ընդունելությունների ու համերգների եւ գոհ է մնացել. «Տոնին ուրիշ ի՞նչ պիտի աներ ժողովուրդը, գիրքն առներ ձեռին՝ մա՞ն գար փողոցներում»: Պարոն Տեր-Գուլանյանը փաստում է, որ տոնը կատարյալ կլիներ, եթե իշխանությունները այս տարի մի քանի գրախանութ բացեին. «Դա իսկապես կլիներ պրազդնիկ»: Նրա համոզմամբ, գրքի տոնը մեկ օր չէ՝ ամբողջ տարին է, հետեւաբար պետք է եզրակացությունները վերջում անել: Հրատարակախոսը գտնում է, որ քաղաքային իշխանությունները պետք է պարտադրեն, որ սուպերմարկետների մի անկյունում գրախանութ գործի, թե չէ քաղաքում դրանց թիվը 3-4-ն է:

Արտեմ Հարությունյանը կարծում է, որ քաղաքապետ Տարոն Մարգարյանը պարտավոր է քաղաքը մաքրել, իր ձեւակերպմամբ՝ աղբ եւ շարիքի կենտրոն համարվող սթրիփ-ակումբից. «Բա ինչի՞ համար եք էդտեղ նստած՝ Ուրարտուի մասին գիրք կարդալո՞ւ, թե՞ մեր հինավուրց քաղաքը աղբից մաքրելու, չէ՞ որ ստրիպտիզանոցը բնակելի շենքի տակ աղբ է: Բոլորը խոսում են մեր հինավուրց անցյալի, պապական ուժերի, տատական հմայքների մասին, բայց ոչ ոք ստրիպտիզանոցին մատով չի կպնում: Երբ բողոքում ես, ասում են՝ բա մեր ժողովուրդը սիրուն ռուսի մարմին չտեսնի՞»: Նրա խոսքով, գրքի անկումը սկսվում է նման բաներից, կապիտալիզմի ներխուժումից ու սխալ ուղիով գնալուց, դպրոցական, բուհական հայ գրականության դասագրքերից, աշխարհը տեսնելու ոչ ճիշտ ձեւերից:

Արտեմ Հարությունյանը կրկին կոչ արեց վարչապետին եւ քաղաքապետին Գրողների միության բնակելի շենքի ու Ն. Աղբալյանի անվան դպրոցի հարեւանությամբ գտնվող ակումբից փրկել իրենց. «Հարգելի պարոն Մարգարյան կամ պարոն Սարգսյան, եթե Ձեր տան տակ լիներ ստրիպտիզանոց, դուք կհանեիք ձեր պետական տված «Մակարովը», եւ կգյուլլեիք այն օլիգարխին, որոնք խայտառակ գործով են զբաղվում»:

Երեւանի ավագանու անդամ, ճարտարապետ Լեւոն Իգիթյանը եւս ցավում է հասարակության դեգրադացման ու արժեքների կորստի համար, նա պատրաստ է Գեղագիտության ազգային կենտրոնի մարզային մասնաճյուղերից առանց վճարի տարածք տրամադրել գրախանութներին:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Կիթառահարների «պապան»՝ Ջոն Ուիլյամսը նամակ գրեց

## Իսկ բրիտանական դեսպանատունը մերժեց կիթառահար Վարդան Շահինյանին

Օրերս Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը դիրիժոր Ռուբեն Ասատրյանի ղեկավարած «Վերածնունդ» կամերային նվագախումբը եւ հրավիրյալ մենակատարները ներկայացրին արեւմտաեվրոպական եւ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: «Առավոտի» ուշադրությունը գրավեց կիթառահար Վարդան Շահինյանի եւ նվագախմբի մատուցմամբ հնչած Արմեն Պողոսյանի «Տանգո Մարիաննա» ստեղծագործությունը: Ժամանակին մեզ հետ զրուցած երաժիշտները փաստում էին, թե դասական կիթառի համար ստեղծագործում է միայն կոմպոզիտոր Նարինե Զարիֆյանը: Եվ դա բացատրում էին նրանով, որ դասական կիթառի երաժշտության հանդիսատեսից հատուկ պատրաստվածություն է պահանջվում, քանի որ ժամանցային արվեստում կիթառը մեծամասամբ հանդես է գալիս իբրեւ նվագակցող, լավագույն դեպքում էլ կիթառով մատուցվում է ֆլամենկո ոճի երաժշտություն: Մեր զրուցակիցը՝ կիթառահար Վարդան Շահինյանը, կիսեց այս կարծիքը, հարց ուղղելով. «Իսկ դասական կիթառի երաժշտություն կարո՞ղ եք հիշել՝ վերջին անգամ ե՞րբ եք հանդիպել հայաստանյան TV-ներով»: Նա հիշեցրեց, որ ունենք դասական կիթառի հայկական դպրոց, որի հիմնադիրն է Էդուարդ Բաղդալյանը, իսկ 1990-ականների սկզբից էլ Երեւանի կոնսերվատորիայում բացվել է դասարան. «Բայց ցավով պետք է նշեմ, որ դասախոսներ, դոցենտներ Նունե Բաղդալյանի, Հակոբ Ջաղացպանյանի դասարանի իսկապես բարձրակարգ երաժիշտները վերջին շրջանում նախընտրում են ստեղծագործել Արեւմուտքում»:



Ռեպլիկին, թե ցանկություն չունի՞ հետեւել գործընկերների օրինակին, կիթառահարը ներկայացրեց 2004թ. իր հետ պատահածը. «Կոնսերվատորիան ավարտելուց հետո (սովորել է Ն. Բաղդալյանի դասարանում) ձայնագրեցի առայժմ իմ միակ «Էքստրոմտ» CD-ն, որը հավանության արժանացավ Լոնդոնի թագավորական ակադեմիայի կողմից, նույնիսկ ինչ-ինչ ֆոնդեր հատկացրել էին ուսման գումարը՝ 30 հազար ֆունտ ստերլինգ եւ, որ ամենակարեւորն է, կատարումներիս իր բարձր գնահատականն էր տվել կիթառահարների «պապան»՝ Ջոն Ուիլյամսը: Նա նույնիսկ նամակ էր ուղարկել ինձ: Արդյունքում՝ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունն ինձ կարճ ու կոնկրետ ասաց, որ ես չեմ կարող մեկնել, քանի որ վստահ չեն վերադառնալուս համար: Կարելի է պատկերացնել այդ ժամանակ իմ հիասթափությունը, բայց արվեստն ինձ հաղթեց»: Վարդան Շահինյանը հայտնեց նաեւ, որ իր տարիքում (30 տարեկան է) անիմաստ է համարում մասնակցությունը մրցույթներին, առավել եւս՝ դրսում ստեղծագործելը, քանի որ նվիրվել է մանկավարժական աշխատանքին, դասավանդում է Կ. Սարաջեւի անվան երաժշտական դպրոցում: Դիտարկմանը, թե մանկավարժությունը չի կարող լրացնել բեմական ստեղծագործական բացը, երաժիշտը համակարծիք լինելով՝ ասաց, թե ինքը բեմ է բարձրանում նաեւ ակումբներում, համագործակցում երգիչների հետ: Հաստատելով այն միտքը, թե մեր լայն լսարանին ծանոթ է ոչ թե դասական, այլ ֆլամենկո ոճը, լավագույն դեպքում՝ իսպանացի կիթառահար Պակո Դե Լյուսիայի անունը, արվեստագետը նախ կատակեց. «Լայն լսարանը Վիսոցկուն ու Հախվերդյանին էլ է ընկալում իբրեւ կիթառահարներ, ինձ էլ հաճախ հարցնում են՝ էդ որ կիթառ ես նվագում, բա ինչո՞ւ չես երգում… Միանշանակ սա քարոզչության պակասի արդյունքն է: Ախր դասական կիթառի համար հիանալի սոնատներ ունի գրած նույնիսկ Պագանինին…»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Մեդալ՝ Ռալֆ Յիրիկյանին

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (ՀՑԹԻ) գիտական խորհուրդը պարգեւատրել է Ռալֆ Յիրիկյանին, Ջեֆրի Ռոբերտսոնին եւ Յուսսի Բյորնին: Թանգարան-ինստիտուտին աջակցություն ցուցաբերած եւ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում ավանդ ունեցող անհատներ արժանացել են «Երախտագիտություն» անվանակարգով թողարկված Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալի: Հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը Համաշխարհային գրքի մայրաքաղաք հռչակելու կապակցությամբ բացվել է «Գիրքը որպես ցեղասպանության վկա» ժամանակավոր ցուցադրություն, որը որոշակիորեն ամփոփում է թանգարան-ինստիտուտի հետ երախտավորների համագործակցության արդյունքները:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն ամփոփել է 2006-2011թթ. ընթացքում իր գործունեության հիմնական արդյունքներն ու նախանշել Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցի կապակցությամբ նախատեսվող միջոցառումների ընդհանուր ռազմավարությունը:




Ասուլիսին մասնակցել են Հայոց ցեղասպանությունն առնչվող պատմական փաստերին ու քաղաքական շահարկումներին նվիրված «Արդյոք եղե՞լ է հայկական ցեղասպանություն» զեկույցի հեղինակ Ջեֆրի Ռոբերտսոնը եւ նորվեգացի միսիոներուհի Բոդիլ Կատարինե Բյորնի թոռը՝ Յուսսի Բյորնը: Նա, ի դեպ, վերջերս հայտնաբերել է Բոդիլ Բյորնի ձեռագիր այն հուշագրությունները, որոնք նկարագրում են 1915թ. Մուշում տեղի ունեցած կոտորածները եւ համարվում էին կորած: Ասուլիսին հաջորդել է հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը Համաշխարհային գրքի մայրաքաղաք հռչակելու կապակցությամբ բացված «Գիրքը որպես ցեղասպանության վկա» ժամանակավոր ցուցադրությունը: Այն ներառում է շուրջ 300 միավոր հնատիպ սկզբնաղբյուրային գրականություն, որը ձեռք է բերվել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, Ջեւան Չելոյանցի (Մոսկվա), «ՎիվաՍել- ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի եւ Տիգրան Քալայջյանի (Կիպրոս) աջակցությամբ: Ցուցադրության մեջ ներառված գրականությունը բաշխված է տարբեր խորագրերի ներքո:

Հայոց ցեղասպանության թանգարանի գիտխորհրդի որոշմամբ, ՀՑԹԻ ցուցաբերած աջակցության եւ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում ունեցած ավանդի համար Ռալֆ Յիրիկյանը, Ջեֆրի Ռոբերտսոնը եւ Յուսսի Բյորնը արժանացել են Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալին, որը թողարկվել է «Երախտագիտություն» անվանակարգով:

VIVAcell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Բուլղարիայում հայ ըմբիշները օլիմպիական 4 ուղեգիր նվաճեցին

**Սոֆիայում ավարտվեց ազատ եւ հունահռոմեական ըմբշամարտի եվրոպական երկրների օլիմպիական վարկանիշային մրցաշարը:**

Երկու մրցաձեւերում էլ շուրջ 40 երկրների ներկայացուցիչներ պայքարում էին իրենց քաշային կարգերում եզրափակիչ մտնելու համար, քանի որ, ըստ միջազգային ֆեդերացիայի ընդունած կանոնակարգի, Լոնդոնի ուղեգիր տրվում էր միայն երկու լավագույններին:

Երկու ոճերում էլ Հայաստանը ներկայացված էր յոթ քաշային կարգերից վեցում, քանի որ մեկական ըմբիշ՝ ազատ ոճայիններից 55 կգ քաշային Միհրան Ջաբուրյանը եւ հունահռոմեական Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ) վարկանիշ արդեն ձեռք էին բերել:

Սկզբում մրցագորգը տրամադրվել էր ազատ ոճայիններին, եւ մեր վեց ըմբիշներից երկուսը կատարեցին իրենց առջեւ դրված խնդիրը: Գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդադյանի տղաներից առաջինը բաղձալի սահմանագիծը հաղթահարեց 66 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը: Ու, չնայած, նա վճռորոշ գոտեմարտում պարտվեց, բայց դա արդեն կարեւոր չէր, որովհետեւ արդեն կատարել էր գլխավոր առաջադրանքը՝ Հայաստանի համար այս մարզաձեւում նվաճելով երկրորդ ուղեգիրը:

Թիմակցի այս հաջողությունը զարգացրեց 84 կգ քաշային Հաջիմուրադ Նուրմագոմեդովը, որն ամբողջ մրցաշարի ընթացքում շկրեց եւ ոչ մի պարտություն եւ օլիմպիական վարկանիշ նվաճելուց բացի, դարձավ հաղթող:

Մի փոքր ավելի էին սպասելիքները հունահռոմեական ոճայիններից, քանի որ գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանի թիմում ընդգրկված են ավելի փորձառու ըմբիշներ: Այս տարի երկրորդ անգամ Լոնդոն մեկնելու իրավունքը վաստակել չկարողացավ Պեկինի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի անցած տարվա չեմպիոն, 55 կգ


Արթուր Ալեքսանյան


Յուրի Պատրիկեեւ

քաշային Ռոման Ամոյանը: Թեեւ նրա մոտ առայժմ ինչ-որ բան չի ստացվում, բայց բոլորս էլ լավ հիշում ենք, թե ինչպես բոլորովին վերջերս Բելգրադում անցկացված Եվրոպայի առաջնությունում կողմնակալ մրցավարությունը խայտառակ ձեւով Ռոմանին պարտություն գրանցեց ադրբեջանցու հետ գոտեմարտում: Եզրափակիչ չհասան նաեւ Ալեքսան Միքայելյանը՝ 60 կգ, Սասուն Ղամբարյանը՝ 66, Հրաչյա Հովհաննիսյանը՝ 84: Դրա փոխարեն գերազանց հանդես եկան 96 կգ քաշային, Եվրոպայի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը եւ Պեկինի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի քառակի չեմպիոն Յուրի Պատրիկեեւը: Նրանք երկուսն էլ հավասարը չունեցան իրենց քաշային կարգերում, ճանաչվեցին հաղթող եւ ուղեգրեր նվաճեցին:

Այսպիսով, մեր երկու հավաքականներն էլ արդեն Լոնդոնի օլիմպիական խաղերի երեքական մասնակից ունեն: Սակայն առջեւում դեռ երկու վարկանիշային մրցաշար կա՝ Չինաստանում եւ Ֆինլանդիայում: Երկու հավաքականներն էլ ապրիլի 25-ին մեկնում են Չինաստան, որտեղ վարկանիշ ստանալու են 1-ից 3-րդ տեղերն զբաղեցնողները, իսկ այնտեղից՝ Ֆինլանդիա: Այստեղ գործելու է Սոֆիայի կանոնակարգը:

Մեր տեղեկություններով, երկու հավաքականներում էլ գլխավոր մարզիչները ըմբիշների փոփոխություններ են կատարել: Արայիկ Բաղդադյանը թիմում թողել է Էդգար Ենոքյանին՝ 96 կգ եւ Ռուսլան Բասիեւին՝ 120: Նրանց հետ Չինաստան կմեկնեն Արթուր Բաղդասարյանը՝ 60 կգ եւ Մուսա Մուրթազալիեւը՝ 74 կգ:

Լեւոն Ջուլֆալակյանը, մեզ հասած լուրերի համաձայն, այս անգամ Ռոման Ամոյանին հանգստանալու եւ անհրաժեշտության դեպքում Ֆինլանդիայում առավելագույնս դրսեւորվելու հնարավորություն է ընձեռում: Նրան փոխարինելու է Ռոբերտ Կիրակոսյանը: 66 կգ քաշային կարգում Չինաստանում մրցագորգ է մտնելու Արամ Ջուլֆալակյանը, 84 կգ-ում՝ Տիգրան Սահակյանը: Իսկ ինչ վերաբերում է 60 կիլոգրամ քաշային կարգին, ամենայն հավանականությամբ ընտրությունը կկանգնի Նարեկ Խաչատրյանի վրա:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## Արոնյանն ու Կրամնիկը համաձայնեցին ոչ-ոքիի



Ցյուրիխում ընթացող աշխարհի երկրորդ եւ երրորդ գրոսմայստերներ Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի միջեւ վեց պարտիայից բաղկացած դասական շախմատի մրցամարտի երկրորդ պարտիան երեկ ավարտվեց ոչ-ոքի: Հաշիվը դարձավ 1,5:0,5՝ հօգուտ Հայաստանի լավագույն շախմատիստի: Այսօր մրցակիցները հանգստանում են, իսկ վաղը Լեւոն Արոնյանը խաղալու է սեւ խաղաքարերով:

## Սիլահ Բորայի խոստովանությունը

Հունահռոմեական ըմբշամարտի Ադրբեջանի հավաքականի գլխավոր մարզիչ Սիլահ Բորան Սոֆիայում անցկացված օլիմպիական վարկանիշային մրցաշարի ավարտից հետո «Day.az»-ին տված հարցազրույցում խոսել է նաեւ 96 կգ քաշային կարգում իր սանի՝ Շալվա Գադաբաձեի եւ Արթուր Ալեքսանյանի գոտեմարտի մասին: «Իհարկե, կարելի էր երազել, որ Գադաբաձեն այստեղ օլիմպիական լիցենզիա վերցներ: Սակայն կիսաեզրափակչում նրան շատ ուժեղ մրցակից էր բաժին հասել՝ Արթուր Ալեքսանյանը, որին նա անզոր է դիմակայել», խոստովանել է Սիլահ Բորան:

# «Ծիծեռնակաբերդը գերեզմանոց չէ, փոսի միջով էլ արյուն չի՛ հոսում»

**Ըստ հոգեբանի՝ սգո օրերին իրականացվող միջոցառումներին չպետք է մասնակից դարձնել երեխաներին**

«Երեխայի ուղեղը մի ծանրաբեռնեք եղեռնի թեմայով ձեր ահասարսուռ պատմություններով: Ասում են՝ թուրքերը սպանել են հայերին, մորթել են, կախել, վառել, մամաների փորը թրերով բացել ու չծնված բալիկներին այնտեղից հանել... Ահա այսպես են նկարագրում իրենց թոռնիկներին, զավակներին ծնողներն ու հարազատները, երբ փորձում են 4-5 տարեկան երեխային բացատրել, թե ինչու են իրենք գնում Ծիծեռնակաբերդ, եւ ինչ է տեղի ունեցել 1915 թվականի ապրիլի 24-ին»,- «Առավոտի» հետ զրույցում ասում է հոգեբան Սվետլանա Հարությունյանը՝ նշելով, որ երեխայի ուղեղը պատրաստ չէ լսել ու ընկալել այսպիսի պատմություններ: Ըստ նրա, սխալ է փոքրիկներին սգո օրերին իրականացվող միջոցառումներին մասնակից դարձնելը: Հոգեբանի մեկնաբանմամբ, երեխային ամեն ինչ էլ կարելի է ասել, բացատրել, տեղեկացնել, բայց այդ ամենը պետք է արվի նրա տարիքին ու զարգացածությանը համապատասխան. «Երեխաներին հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված թշնամանք ներարկելով՝ հայրենասեր չեն դարձնում: Չի կարելի փոքրուց սերմանել, որ թուրքերը վատն են, քանի որ մեզ կոտորել են, մենք ցեղասպանվել ենք, դրա համար նրանց ատում ենք ու անպայման պիտի վրեժ լուծենք: Պարտադիր վրեժ լուծելու գաղափարը երեխային դարձնում է ագրեսիվ: Իսկ այդ ագրեսիան կուտակվելով՝ մի օր կփայթի ու կվնասի հենց այդ բալիկին»:

Ըստ Ս. Հարությունյանի՝ հայերն իրենց սովորության համաձայն՝ ամեն տարի ապրիլի 24-ին բռնում են փոքրիկի ձեռքն ու նրան Ծիծեռնակաբերդ քարշ տալիս: Ամբողջ ճանապարհին երեխան ոտքի տակ է ընկնում, ահավոր հոգնում ու ընթացքում լսում ծնողների մեկնաբանությունները՝ կապված եղեռնի զոհերի հիշատակի հետ: Հոգեբանը գտնում է, որ այս ամենը պետք է այլ կերպ անել: «Նախ եւ առաջ եղեռնի հետ կապված պատմություններում հարկ է զգույշ լինել, ոչ մի դեպքում երեխային վրեժ «չներարկել», պարզապես ներկայացնել սուգը հնարավորինս մեղմ ձեւով: Ոչ թե հենց ապրիլի 24-ին երեխային տանջելով պետք է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տանել, այլ ավելի հարմար օրերի, որ չհոգնի, կամ այդ ափիոտածը տեսնելով



վախենա ու մտածի, որ այդ ամենը հենց նոր է կատարվել: Երբ երեխան պատրաստ կլինի ապրիլի 24-ին գնալ եւ ծաղիկ դնել եղեռնի զոհերի հիշատակին, առանց ձեզ ավելորդ հարցեր տալու՝ այն ժամանակ էլ նրան կտանեք»,- խորհուրդ է տալիս հոգեբանը:

Ս. Հարությունյանն ասում է, որ հաճախ ծնողներն իրենք են վախեցնում իրենց երեխաներին, հետո զարմանում, թե ինչից կամ ինչպես պատահեց, որ այդպես եղավ: Բայց, ըստ նրա՝ գույները խտացնելով, դաժան պատմություններ պատմելով՝ երեխային չես կրթի: Հոգեբանը նշում է, որ հաճախ նույնիսկ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հետ կապված պատմություններն են չափազանցեցվում. «Մի անգամ, ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդի ճանապարհին երեխայի հարցին, թե ինչու են մարդիկ այսքան ծաղիկ բերել այստեղ եւ ինչ կա այդ ծաղիկների հետեւում, փոսի մեջ, մայրը 6 տարեկան տղային տվել է հետեւյալ բացատրությունը. ծաղիկների հետեւում գերեզմանոց է, փոսի մեջ էլ թուրքերի կողմից սպանված մարդկանց արյունն է հոսում: Այսինքն՝ ծնողի անհեթեթ պատասխանն անգիտակցաբար խաթարել է փոքրիկի հոգեբանությունը: Երեխան սթրեսի մեջ էր, շոկ էր ապրել: Վախեցել էր, ու նրան անընդհատ թվում էր, թե թուրքերը՝ մեր ոխերիմ թշնամիները, էլի եկել են հայերին սպանելու: Այդ վախից երեխան սկսել էր կակազել: Հոգեբանական օգնություն ցույց տալուց ահագին երկար ժամանակ անց տղայի մոտ գրեթե անցավ ամեն վայրկյան հետապնդվելու, սպանվելու վախը, իսկ կակազելը՝ ոչ: Աբսուրդ վիճակ էր: Ես կարծում եմ, այս հարցում նախ պետք է ծնողներին կրթել, հետո նրանց վստահել երեխաներին»,- հավելեց հոգեբանը, ծնողներին խորհուրդ տալով՝ մինչ երեխային եղեռնի թեմայով պատմություններով վախեցնելը՝ ինքնակրթվել:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ